ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետափնյա, (093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2015թվականի N 22-Ն

2016Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 և 19 կետերի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 և 10-րդ հոդվածների պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Գետափնյա համայնքի 2016 թ – ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար

1/ Մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

2/ Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201 – ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ

բ/ 501 -ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25000 դրամ

գ/ 1001 – ից մինչև 3000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 35000 դրամ

դ/ 3001-ից և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ Մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500դրամ
4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

1/ Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության - 1500 դրամ

2/ Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանցված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով

3/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է - 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝

1/ Ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 5000 դրամ

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 7000 դրամ

5. Համայնքի տարածքում

1/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ մեկ քմ–ի համար

2/ Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

- 150000 դրամ

3/ Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 30000 դրամ

4/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 50000 դրամ

5/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 6000դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում – 1000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ Առևտրի օբյեկտների համար - 25 000 դրամ

2/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար – 50 000 դրամ

3/ Բաղնիքների /սաունաների / համար - 200 000 դրամ

4/ Խաղատների կազմակերպման համար - 500 000 դրամ

5/ Շահումով խաղերի կազմակերպման համար - 250 000 դրամ

6/ Վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի համար տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1000 դրամ

2/ Թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2500դրամ

3/ Այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ

4/ Դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ

8. «Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 50000 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է – 3000 դրամ

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10 000 դրամ

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության

ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 5000 դրամ

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել – 3000 դրամ
13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել - 3000 դրամ
14. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճար սահմանել

1/ Յուրաքանչյուր բնակչի համար - 50 դրամ

2/ Սպասարկման կազմակերպությունների համար - 400 դրամ

15. Սույն որոշման 1–ին, 2–րդ, 3–րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0,5 գործակցով:

Կողմ 7 **դեմ 0** **ձեռնպահ 0**

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

2. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ

3. ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ

6. ԹԱՄԻՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱԶԱՏՅԱՆ